Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Արեգունու միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ի դասվար 17/դասաժամ առարկաներիի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի :

Թեստավորման փուլն անցկացվում է ՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին :

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում/ՁԼ1/,

-մեկ լուսանկար3*4 չափի,

-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ/դիպլոմ/,/միջին մասնագիտական կրթություն ունեցող և կամավոր ատեստավորում անցած ուսուցչի կողմից դպրոցի թափուր տեղի մրցույթին մասնակցելու դեպքում միջին մասնագիտական կրթության փաստաթուղթ/,

-անձը հաստատող փաստաթուղթ,

-<<Հանրակրթության մասին>>ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան՝աշխատանքային գրքույկի պատճենը /առկայության դեպքում/և աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից,

-ինքնակենսագրություն /ՁԼ 5/,

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

-ՀՀ արական սեռի քաղաքացիները նաև զինվորական գրքույկ,

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր/առկայության դեպքում/,

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝հավաստող փաստաթուղթ,

-Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի 596-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան՝ հաստատությունից դուրս մնացած լինելու մասին, կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն/մասնակցած լինելու դեպքում/

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել կամ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն թվականի սեպտեմբերի 8-ից մինչև սեպտեմբերի 21-ը ներառյալ, ամեն օր՝ժամը 10:00-ից մինչև 16:00-ն,բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 25-ին՝ ժամը 13:00-ին, <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Արեգունո ւ միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում Հասցեն՝ գ.Արեգունի,փողոց 8 շենք 1:

Տեղեկությունների համար զանգահարել՝094 464468 հեռախոսահամարով: